ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՆԳՈՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ԱՇՈՏԻ

ԳՈՅԱԿԱՆԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱՁԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լալիկ Մնացականի Խաչատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աննա Հենրիկի Աբաջյան

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Վարսիկ Արմենի Ներսիսյան

Առաջատար կազմակերպություն՝ «Շիրակի Մ.Նալբանդյանի անվ. պետական համալսարան» հիմնադրամ

Պաշտպանությունը կայանալու է 2022 թ. հունիսի 27-ին՝ ժամը 15^{00}-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտում գործող ԲՈԿ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թ. մարտի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝ Ն.Մ.Սիմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը

Լեզվի զարգացման ընթացքում նրա կառուցվածքում ի հայտ են գալիս մակարդակային միավորների զուգաձևություններ, որոնք համարվում են տարբերակներ՝ արտահայտելով քերականական միևնույն իմաստը:

Հին հայերենի գոյականի զուգաձևություններն ի հայտ են գալիս հոլովման համակարգում և թվի քերականական կարգում: Համաժամանակյա կտրվածքով այդ հարցերի համալիր ուսումնասիրությամբ է պայմանավորված սույն հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակն է.

1. բացահայտել գոյականի ձևաբանական զուգաձևությունների հիմքերը հին հայերենում,

2. ցույց տալ զուգաձևությունների ընդհանուր արտահայտությունը գոյականի խոսքիմասային համակարգում,

3. հետազոտության ընթացքում գտնել որոշակի սկզբունքներ, որոնք կարող են հնարավորինս համակարգել գոյականի զուգաձևությունները,

4. գոյականի ձևաբանական զուգաձևությունները հաստատել դասական հայերենի մատյանների բնագրային վկայություններով:

Հետազոտության նպատակին համապատասխան՝ ձևակերպվել են հետևյալ **խնդիրները.**

1. Վեր հանել գոյականի հոլովական զուգաձևությունների կառուցատիպերը V դարում՝ ըստ պարզ և խառը հոլովումների.

2. Բացահայտել գոյականի թվակազմական զուգաձևությունների կառուցատիպերը և դրանք պայմանավորող գործոնները.

Հետազոտության մեթոդները.

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները.

ա) համաժամանակյա մեթոդ,

բ) նկարագրական մեթոդ,

գ) վերլուծական մեթոդ,

դ) վիճակագրական մեթոդ:

Հետազոտության գիտական նորույթը: Ուսումնասիրության ընթացքում բացահայտվել են գոյականի հոլովական զուգաձևությունների խմբերը, զուգաձևություն ցուցաբերող հոլովանիշ թեքույթների տեսակները, առանձնացվել են զուգաձևությունների հոլովական հիմքերը, զուգաձևություն պայմանավորող լեզվական գործոնները, որոնք բնորոշ են հին հայերենին:

Գոյականի թվակազմության համակարգում բացահայտվել են առաջնային և երկրորդային թեքույթների գործառական արժեքները, որոնցով

պայմանավորված են գոյականի թվի քերականական կարգի զուգաձևություն-ները:

Հետազոտության տեսական նշանակությունը: Սույն հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ բացահայտում է դասական հայերենի ձևաբանական նորմի և ձևաբանական զուգաձևությունների հարաբերակցված փոփոխությունները, վեր է հանում զուգաձևությունների կառուցատիպերը, լեզվական համակարգված նյութը կարող է տարժամանակյա ուսումնասիրությունների համեմատության եզր դառնալ գրաբարի և միջին հայերենի կամ գրաբարի և ժամանակակից հայերենի լեզվափուլերի միջև:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության փաստական նյութը գործնականում կարող է նպաստել հին հայերենի զուգաձևությունների բառարան կազմելու աշխատանքներին, այն կարող է օգտագործվել լեզվի պատմության տեսական դասընթացներ կազմելիս, ինչպես նաև կարող է մասնագիտական հատուկ դասընթացների նյութ դառնալ բանասիրական ֆակուլտետների կրթական օղակներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է համակարգչային 158 էջից: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, մատենագիտական ցանկերից և հավելվածից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ անդրադարձ է կատարվում գոյականի ձևաբանական զուգաձևությունների ուսումնասիրման պատմությանը:

- Սկսած Դ.Թրակացու «Արուեստ քերականութեան» աշխատությունից և նրա մեկնություններից՝ ձևաբանական զուգաձևությունները դարձել են ուշադրության առարկա. ընդ որում՝ այդ զուգաձևությունները դիտարկվել են ինչպես բառաթեքական (հոլովական) հարացույցում, այնպես էլ հնչյունական մակարդակում (Դավիթ, Անանուն Մեկնիչ, Մովսես Քերդող, Ստ.Սյունեցի, Գր.Մագիստրոս):
- Մի շարք հեղինակներ քննել են խնդրո առարկա տարբերակները հատկապես գոյականական, թվականական, դերանվանական և բայական համակարգերում: Ըստ որում՝ առավել շատ ուշադրություն են հատկացրել անունների հոլովման և բայի խոնարհման հարացույցներում հանդիպող այդօրինակ ձևերին (Ա. Բագրատունի, Մ. Սեբաստացի, Մ. Չամչյան, Ա. Այտընյան, Մ. Աբեղյան, Ա. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Ս. Ղազարյան, Գ. Խաչատրյան):
- Քննել են զուգաձևությունները գոյականի թվի քերականական

կարգում (Մ.Աբեղյան, Ա. Աբրահամյան, Հ. Պետրոսյան, Լ. Խաչատրյան, Գ. Թոսունյան, Էդ.Մկրտչյան):

- Ուշադրություն են հատկացրել թվականական և դերանվանական զուգահեռ ձևերին հատկապես նրանց հոլովման հարացույցներում (Ա. Բագրատունի, Մ. Սեբաստացի, Մ. Չամչյան, Ա. Այտընյան, Մ. Աբեղյան, Ա. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Լ. Խաչատրյան, Գ. Թոսունյան, Էդ.Մկրտչյան, Վ. Համբարձումյան):
- Անդրադարձել են ձևաբանական նորմին, ձևաբանական զուգաձևությունների ու նրանց առաջացման հարցերին (Ա. Բագրատունի, Ա. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Ս. Ղազարյան, Զ. Աղաջանյան և ուրիշներ):

Առաջին գլուխը («Գոյականի ձևաբանական զուգաձևությունները հին հայերենում») բաղկացած է երկու ենթագլուխներից :

1.1 ենթագլխում («Զուգաձևությունների ձևավորման հիմքերն ու աստիճանները») լեզվում արձանագրվող ձևաբանական զուգաձևությունները բխեցվում են ձևաբանական նորմի փոփոխություններից: Նորմը լեզվական առավել մնայուն և ավանդական համակարգերի իրացման ամբողջությունն է, որ ընտրվել և կայունացել է հասարակական հաղորդակցման գործընթացում: Նորմը հասարակության կողմից գիտակցորեն ամրացված, մշակված, կայուն և միատեսակ լեզվական միջոցների ու դրանց կիրառման կանոնների ամբողջությունն է, որը համարվում է տվյալ ժամանակաշրջանի ազգային գրական լեզվի յուրահատուկ բնութագրիչ: Առավել լայն ըմբռնումով՝ նորմը մեկնաբանվում է որպես լեզվի զարգացման բոլոր փուլերի անբաժանելի բաղադրիչ: Զուգաձևություն հասկացությունը սերտորեն առնչվում է լեզվական նորմի ըմբռնման հետ: Յուրաքանչյուր զարգացած լեզու նորմավորված է, իսկ տարբերակայնությունը և զուգաձևությունը բնորոշ են նորմավորված գրական լեզուներին:

Այսպես, գրաբարի հոլովական համակարգում կանոնավոր հոլովումներին զուգահեռ հանդես են գալիս տարբերակային ձևեր, որոնք համարվում են հոլովական զուգաձևություններ: Դրանք հանդես են գալիս հետևյալ կառուցատիպերով. Ո//Ի (աղանդոյ-աղանդի), Ի//Ա (Հայկայ-Հայկի), Ո//Ու (չափոյ-չափու), Ու//Ան (մահու-մահուան), Ա//Ու (Յոհաննայ-Յոհաննու), Ի//Ու (գանձի-գանձու), Ա//Ո (Գնելայ-Գնելոյ), Եան//Ո խորհրդեան-խորհրդի) և այլն:

Հայ լեզվաբանության մեջ *զուգաձևություն* տերմինի գործածության անմիօրինակություն կա. հանդիպում են *փարբերակայնություն, զուգադրություն, զուգահեռություն, եռաձևություն, բազմաձևություն* տերմինները, իսկ նրա բաղադրիչ տարրերն անվանվում են *զուգաձև, զուգահեռ ձև, զուգադիր, փարբերակ, փոփոխակ, ձևակ, ենթաձևույթ, այլակ, այլաձևակ, վարիանտ* և այլն:

Զուգաձևությունները լայն առումով կարելի է համարել քերականական համանիշներ, քանի որ զուգաձև տարրերը իմաստով նույնն են, ձևով՝ տարբեր:

Զուգաձևությունները հանդիպում են հետևյալ երեք աստիճաններում.

- զուգաձևերի մի մասը գտնվում է կազմավորման փուլում,
- զուգաձևերի մյուս խումբը կարող է գտնվել մրցակցության փուլում,
- երրորդ խումբը կարող է գտնվել մարման փուլում:

1.2 ենթագլխում («Գոյականի հոլովական զուգաձևությունների կառուցատիպերը V դարում») պատմիչների երկերի ընձեռած նյութի շրջանակներում կատարվել է հոլովային զուգաձևությունների քննություն՝ ըստ հետևյալ տիպերի՝ Ո//Ի, Ի//Ա, Ո//Ու, Ու//Ան, Ա//Ու, Ի//Ու, Ա//Ո, Եան//Ո, Եան//Ի, Ø//Ա կամ Ø//Ո[1]:

1. **Ո//Ի**. **Աղանդ** – Խորհեցան մոլեկան արիանոսացն **աղանդոյն** վարդապետք (Բուզ., 81): Որպէս կամեցաւ պայքար առնել ի մէջ ձախող **աղանդին** արիանոսաց (Բուզ., 51):

2. **Ի//Ա**. Յաղագս **Վահրիճի**, որ ... տայր պատերազմ ընդ թագաւորին Հայոց (Բուզ., 53): Յաղագս **Վահրճայ**, որ ... տայր պատերազմ ընդ Արշակայ (Բուզ., 125):

3. **Ո//Ու**. Լուաւ զթիւ **համարոյ** բազմութեանն (Եղ., 96): Լինէր հանդէս **համարուն** վաթսուն և վեց հազար այր ընդ հեծեալ և ընդ հետևակ (Եղ., 100):

4. **ՈԽ//Ան**. Յայնժամ հասեալ մեծին Սահակայ հիւանդութիւն **մահու** (Բուզ., 355): Ոչ թողում հօրեղբօր իմում զվրէժ **մահուան** հօր իմոյ (Խոր., 282):

5. **Ա//Ու**. Զինուորեալ ի դուռն Հայոց արքային **Խոսրովայ** (Փարպ., 13): Դրոշմեաց զքինախնդրութիւնն **Խոսրովու** (Փարպ., 2):

6. **Ի // Ու.** Ամենայն ոք յիւրաքանչիւր տեառն աստուծոյ զեղեալ ուխտս կատարէին, որ ի վերայ հոգևոր **գանձին** հայրապետին (Բուզ., 93): Մեծարեցաւ ի նմանէ բազում **գանձու** ոսկւով և արծաթով (Բուզ., 105):

7. **Ա//Ո**. Սկսաւ դնել թշնամանս ազգին **Արշակունեաց** (Բուզ., 145): Եհաս նա մինչև ի ճամբար բանակին **Արշակունւոց** (Բուզ., 121):

8. **Եան // Ո.** Հասեալ իցեն ի ժամանակս **ծննդեան** (Ագաթ., 321): Այնր **ծննդոյ** Հօր ... նա միայն գիտէ (Ագաթ., 195):

9. **Եան//Ի**. – Յանօրէնութեանցն **ժողովրդեան** իմոյ ի մահ վարեցաւ (Ագաթ., 228): Նաւիցեմք զալեօք ... ծովուս, պատմել յազգ յայլ **ժողովրդին** ստացելոյ (Ագաթ., 12):

---

[1] Գրաբարի հոլովական զուգաձևությունների մասին տե՛ս, մասնավորաբար, Լ.Հովսեփյան, Շ.Ասլիբեկյան, «Հոլովական զուգաձևությունները գրաբարում», Հայագիտական միջազգային երկրորդ գիտաժողով, («Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները»), Ե. 2014:

10. **Ø//Ա կամ Ø//Ո.** Մեր բնիկ տեարք էք և **հարցն** մերոց և նախնեաց (Փարպ., 138): Եղև նա վարդապետ կատարեալ վարդապետաց իւրոց և սուրբ հայր խրատտու **հարանց** իւրոց (Եղ., 191):

Եւ յաջմէ **ջուրց** հոսանաց ի բարձրաւանդակում կուռ կալով ի տեղւոջ երևեցաւ նոցա բազմութիւն անկարգ հրոսակի (Խոր., 35): Օդք դառնաշունչք, **ջրոց** առաւելումն անօգուտ և նուազելն անհնարաւոր (Խոր., 365):

Երկրորդ գլուխը («Գոյականի հոլովական զուգաձևությունները հին հայերենում») բաղկացած է հինգ ենթագլխից:

2.1 ենթագլխում տրվում են զուգաձևությունները գոյականի թե՛ կանոնավոր և թե՛ անկանոն հոլովումներում:

Ա. Կանոնավոր հոլովումների զուգաձևությունները *ուղղական հոլովում* կարելի է խմբավորել ըստ պարզ և խառը հոլովատիպերի և ըստ արտաքին ու ներքին թեքումների:

ա) Զուգաձևություններ կանոնավոր (պարզ և խառը) հոլովումներում

1. Ա արտաքին հոլովման գոյականների զուգաձևություններ

Ձևաբանական (հոլովական) - հնչյունափոխական տարբերակներ են ի հայտ գալիս հատկապես հունական հատկանունների ելակետային ձևերում (ուղղական հոլովում). Եզրաս/Եզրա/Եզր, Զաքարիաս / Զաքարիա / Զաքարի, Հերակլէս / Հերակլ, Սոկրատէս/ Սոկրատ, Աքիլլեւս/ Աքիլլէս, Յակոբոս/ Յակոբ, Մենեղաւոս / Մենեղայոս, Հոմերոս / Հոմեր, Դոմեդիանոս /Դոմեդր և այլն:

2. Ա ներքին հոլովման գոյականների զուգաձևություններ

Այս հոլովումը կենսունակ է գրաբարում: Ըստ որում՝ Ա ներքին թեքման շրջանակներում ուղղական հոլովում զուգահեռ ձևերը գոյակցում են թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվում:

Որոշ գոյականներ եզակի ուղղականում հանդես են գալիս անհնչյունափոխ և հնչյունափոխված տարբերակներով (ն ձայնորդի անկումով). դրանք միաժամանակ հիմքային տարբերակներ են. սերմն/սերմ, կռունկն/կռունկ, խուփն/խուփ, կրուկն/կրունկ/կրուկ և այլն:

Ա ներքին թեքման շրջանակներում հոգնակի թվում ևս առկա են հոլովական տարբերակներ: Հմմտ. սերմունք/սերմանք, կողմունք/կողմանք, մահունք/ հազվադեպ՝ մահուանք:

3. Ի հոլովման գոյականների զուգաձևություններ

Այս հոլովման շրջանակներում զուգահեռ ձևերը խիստ հազվադեպ են: Հմմտ. հատկանվանական հետևյալ տարբերակները. Սաւուղ/ Շաւուղ, Արսենիոս/ Արսէն/ նաև՝ Արսենի[2], Հոմերոս/ Հոմեր/ Հոմերոն, Անտոնիոս/

[2] Վերջինս նույն ձևով և՛ ուղղական է, և՛ սեռական (տե՛ս Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 22):

Անտոն, Եւսեբիոս/ Եւսեբէս, Աղեքսանդրիա/ Աղեքսանդր, Կայէն/ Կային, Բարսեղ/ Բարսիղ, Ազարիա/ Ազարեայ:

4. Ո հոլովման գոյականների զուգաձևություններ

Այս հոլովման շրջանակներում թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվում հազվադեպ են ուղղականի տարբերակային ձևերը, ընդ որում՝ եղածներն էլ հիմնականում հոլովման փոխանցումներով հանդես եկող բառեր են: Հմմտ. անթ / անութ (n // ի, ng), բեհեզ / բեհէզ (ոյ, ng // ի, ag), կազմուած / կազմած (ոյ, ng, // ի): Ձևաբանական – հնչյունական տարբերակներ են ձմերային / ձմերայնի զուգաձևերը: Զուգաձևություններ հոգնակի թվում. բլուրք / բլերք, հայք / հայեր, մարդք / մարդիկ:

5. Ու հոլովման գոյականների զուգաձևություններ

Եզակի և հոգնակի ուղղականում խիստ սակավ են տարբերակային քերականական ձևերն այս հոլովման շրջանակներում: Հատուկ անուններում ի հայտ եկող զուգաձևություններ են՝ Յովհաննէս/ Յովհան, Յովսէփ/Յուսէփ: Հմմտ. նաև եզակի հետևյալ երկձևությունները. աղուէս//աղուես (է//ե հնչյունափոխական տարբերակներով):

6. Ե հոլովման բառերի զուգաձևություններ

Այս հոլովման ենթարկվող բառերի սակավաթիվ այլաձևություններում հանդիպում են -իւր / -եւր մասնիկով վերջավորվող (ձևաբանական-հնչյունական) ձևեր եզակի ուղղականում. ալիւր / ալեւր, աղբիւր / - աղբեւր, եղջիւր / եղջեւր, եղտիւր / եղտեւր // նաև՝ աղտիւր / աղտեւր:

7. Ի – Ա խառն արտաքին հոլովման գոյականների զուգաձևություններ[3]

Այս հոլովման ենթարկվող բառերը մասնավորաբար եզակի ուղղականում են դրսևորում զուգաձևություններ: Ընդ որում՝ դրանք ձևաբանական–հնչյունափոխական տարբերակներ են: Հմմտ. եզակի ուղղականի հետևյալ զուգաձևությունները. անդէորդ / անդեւորդ / անդիորդ / անդւորդ (նախրապան), անդրավար // անդրուար / անդրուվար (1. զույգ ձի կամ ջորի՝ կառքին լծած, 2. լծված կառք, 3. խաբող օձ), գառագիղ / գառագեղ (1. մետաղե վանդակ, 2. բանտ):

Հանդիպում են Ի–Ա արտաքին // ներքին հոլովման օրինաչափություններ դրսևորող հոգնակի հետևյալ զուգահեռ ձևերը. քուրմք / քրմանք / քրմունք:

8. Ի – Ա խառը ներքին թեքման գոյականների զուգաձևություններ

Այս դեպքում հոգնակի ուղղականում են ի հայտ գալիս երկձևություններ: Հմմտ. եղինք / եղունք, անձինք / անձունք, քրտինք / քրտունք, գառինք / գառունք, խաշինք / խաշունք, թոռունք / թոռանք, ազինք /

---

[3] Գրաբարում Ի–Ա խառն արտաքին հոլովման պատկանող բառերի ուղղական և հայցական հոլովներում զուգահեռ ձևեր սակավ են հանդիպում:

ազունք[4], վեհազինք / վեհազունք, հարսինք / հարսունք: Ուշագրավ են **մեծաբեռն** և **ծանրաբեռն** բարդությունները, որոնցից առաջինը հոգնակի ուղղականում ունի **մեծաբեռունք,** իսկ երկրորդը՝**ծանրաբեռինք** // նաև՝**ծանրաբեռնիք** ձևերը, թեպետև ընդհանուր վերջնաբաղադրիչով բարդ բառեր են:

9. Ո–Ա խառն արտաքին հոլովման գոյականների զուգաձևություններ

Ուղղական հոլովում այսօրինակ զուգաձևություններ քիչ են հանդիպում: Մասնավորաբար եզակի ուղղականում են հանդես գալիս այդ կարգի փոփոխակները. Վարդանուհի / Վարդուհի, աստուածուրհի / աստուածուհի:

բ) Զուգաձևություններ անկանոն հոլովումներում

Անկանոն հոլովման ենթարկվող բառերում ի հայտ են գալիս ձևաբանական տարբերակներ: Հմմտ. եզակի ուղղականում հնչյունական հետևյալ զուգաձևությունները. գեւղ / գիւղ / գեաւղ / գեօղ, հաւր / հօր, մաւր / մօր, եղբաւր / եղբօր, աւր / օր:

Հմմտ. ձևաբանական – բառակազմական հետևյալ տարբերակները եզակի ուղղականում. տէր / տի այր /տի–այր (մեծ կամ հզոր այր):

Անդրադառնանք նաև տարբերակայնություն դրսևորող հոգնակերտ այլ մասնիկներով կազմված ուղղական հոլովին[5]: Հմմտ. հետևյալ ձևաբանական տարբերակները. արմատիք / արմտիք, գահինք / գահք, աստեղունք / աստղունք, երիցունք / երիցունիք, անուանք / անուանի, աւագանի / աւագայնի, խրձներ / խրձեր, չարեր / չարիք, ազգք / ազգեր, գայլք / գայլեր:

2.2 ենթագլխում տրվում են զուգաձևությունները գրաբարի հայցական հոլովում: Ըստ կանոնավոր հոլովումների դիտարկելով խնդրո առարկա հարցը՝ նկատելի են քերականական (գոյականական) հետևյալ երկձևությունները. (զ) մրջիւն // - իմն, (զ) մրջիւնս / - մունս, (զ) սերմն / (զ) սերմ, (զ) սերմունս / - անս, զդուրս / զդրունս (Ա ներքին հոլովման գոյականների եզակի և հոգնակի հայցական), (զ) դստերս / (զ) դուստրս (Ե հոլովման բառերի եզակի և հոգնակի հայցական) և այլն:

Անկանոն հոլովման ենթարկվող բառերում հանդիպում են զուտ ձևաբանական զուգաձևություններ՝ պայմանավորված հիմքի տարբերակայնությամբ: Հմմտ. հոգնակի հետևյալ երկձևությունները. (զ) տէրս /

---

[4] Ազն – ազինք (սերունդներ, ցեղեր) // ազունք (ազնվական մարդիկ): Հոգնակի թվում ակնհայտ են ինչպես ձևային, այնպես էլ իմաստային տարբերությունները:

[5] Հավաքականության իմաստ արտահայտող գրաբարյան հոգնակերտ մասնիկների մասին հանգամանորեն տե՛ս Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 20: Լ. Խաչատրյան, Գ. Թոսունյան, Գրաբարի դասագիրք, Ե., 2004, էջ 24-25:

(զ) տեարս[6], (զ) քեռս // (զ)քորս: Ձևաբանական – հնչյունական են հետևյալ զուգաձևությունները. (զ)աւր / (զ)օր, (զ) գեաւղ / (զ) գեղ / (զ) գիւղ, (զ) գեաւղս / (զ)գեղս / (զ)գիւղս:

2.3 **ենթագլխում** տրվում են գոյականի զուգաձևությունները սեռական և տրական հոլովներում:

Ի. Ա պարզ արտաքին հոլովման բառերի զուգաձևություններ

Այս հոլովման պատկանող շատ գոյականների հոլովումն անկայունություն է դրսևորում: Թեքվելով տարբեր հոլովիչներով՝ այդօրինակ բառերը հանդես են բերում հոլովական տարբերակայնություն: Հմմտ. Ա և Ի հոլովիչներով թեքված հետևյալ բառաձևերը. Ասիայ // Ասիայի, Բեթղեհէմայ // Բեթղեհէմի, Ելամայ // Ելամի, Երեմիայ // Երեմիայի: Հանդիպում են նաև հնչյունափոխված և անհնչյունափոխ զուգաձևություններ. Բէլ – Բելայ // Բէլայ, Տիրիթ – Տիրթայ // Տիրիթայ, Մարիամ – Մարեմայ // Մարիամայ:

2. Ա պարզ ներքին հոլովման բառերի զուգաձևություններ

Ա ներքին հոլովման ենթակա բառերից մի քանիսը, շեղվելով հոլովական օրինաչափությունից, սեռական և տրական հոլովներում փոփոխակներով են հանդես գալիս: Հմմտ.

Ա // Ի – խցիկ – խցկան // խցկի, օդիկ – օդկան // հիմնականում՝ օդկի, թաքուստ – թաքստեան // թաքստի, փախուստ – փախստեան // փախստի, հանգիստ – հանգստեան // հանգստի[7]:

Ա // Ո. սերունդ – սերնդեան // սերնդոյ, սերնդոց, ծնունդ – ծննդեան // ծննդոյ, ծննդոց:

Ա // Ու. մահ – մահուան // մահու, մահուանց // մահուց (հմմտ. նաև պառաւ – պառաւու, պառաւանց, երէց – երիցու, երիցանց. ստացվում է յուրահատուկ Ու – Ա խառը հոլովում):

Ա // Ի // Ո – սնունդ – սննդեան, սննդեանց, նաև՝ սննդի, սննդոց, ժողովուրդ – ժողովրդեան // ժողովրդի // ժողովրդոյ, հոգն. ժողովրդոց:

3. Ի պարզ հոլովման բառերի զուգաձևություններ

Գրաբարում հանդիպում են բառեր, որոնք զուգաձևություն են ցուցաբերում Ի // Ի – Ա հոլովիչներով. ախոյան, անջրպետ, ապաշաւ (զոջում), ապառաժ, ապաստան, առագաստ (ի - ա հոլովմամբ՝ ուշ շրջանում), առասան,

---

[6] Ըստ Ա. Բագրատունու՝ ոչ միայն հոգնակիում, այլև եզակի թվում դիմորոշության *ես տէրս* իմաստ են արտահայտում *տեարս / տէրս* տարաձևությունները (տե՛ս Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 35):

Այսօրինակ (տէրս // ես տէրս) տարբերակները դասվում են ձևաբանական – շարահյուսական զուգաձևությունների շարքը:

[7] -Ունդ, -ուստ, -ուրդ վերջածանցներով մի շարք բառեր, ինչպես նաև *հանգիստ* գոյականը Ա ներքին թեքման պատկանող բառերի նմանությամբ են հոլովվում (տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 33):

արուեստ (ի - ա հոլովմամբ հազվադեպ), գավառագիւղ, բերդ, գռեհ // գոռեղ (վերջինս՝ Ի // Ո), գունդ[8], դաստակերտ. եկամուտ, եղէգ, զոյգ, իղձ, իջավայր, լաստ (ի – ա՝ ուշ շրջանում), լեգէոն / լեգէովն / լէգէոն:

Ի հոլովման պատկանող հատուկ (անհոգնական) անուններում ևս պատահում են հնչյունական տարատեսակություններ. Բենիամին – Բենիամինի // Բենիամենի, Արիմն – Արիմնի // Արիմենի, Սաուղ// Շաուղ – Սաուղի // Շաուղի // Շաղի, Աղեքսանդրոս // Աղեքսանդր:

4. Ո հոլովման բառերի զուգաձևություններ

Ո հոլովման ենթարկվող բառերի մի մասը թեքվում է նաև Ի հոլովմամբ: Հմմտ. աղբ (ուշ շրջանում՝ -ի, -ից), աղերս, բերք, գուբ, դարման, երազ (-ոյ // -ի), լուսին, ցուրտ, փոր, փորձ, ամոլ, անթ// անութ (-ոյ// -ի, -ոց), անօթ, դեղ, ընթերցուած (-ոյ, -ոց // - ից), կազմուած // կազմած (-ոյ // -ի, -ոց) և այլն: Հմմտ. նաև հետևյալ հատկանունները. Մակեդոնիա – Մակեդոնուոյ // Մակեդոնոյ, Սամարիա – Սամարիոյ // Սամարուոյ, Վռամշապուհ – Վռամշապուհոյ // Վռամշապհոյ:

5. Ու հոլովման բառերի զուգաձևություններ

Ու հոլովման ենթարկվող բառերի մի մասը, թեքվելով այլ հոլովիչներով, սեռ./ տր. հոլովներում ցուցաբերում է զուգաձևություններ: Հմմտ.

Ու // Ա արտ. հ. նկար (- ու, -ուց// -աց), Ղուկաս (սեռ. Ղուկասու// Ղուկայ):

Ու // Ա ներքին հոլովում. մահ (մահու// մահուան):

Ու // Ի. առաւօտ, ժամ, կողոպուտ, վնաս, գանձ, բարք// բարոյք (բարուց// բարոյից), զէն (զինու, զինուց// զինից), պահ, վաշտ, դրօշ:

6. Ե հոլովման բառերի զուգաձևություններ

Այս հոլովման պատկանող որոշ գոյականների հոգնակի սեռական և տրական, ինչպես նաև բացառական ու գործիական հոլովներում զուգահեռաբար հանդես է գալիս Ա հոլովիչը, հմմտ. աստղ- աստեղ, աստեղց// աստեղաց, արկղ- արկեղ, արկեղց // արկեղաց, կայսր- կայսեր, կայսերց// կայսերաց, ոսկր- ոսկեր, ոսկերց/ ոսկերաց, դուստր- դստեր, դստերց// դստերաց:

II. Խառը և անկանոն հոլովումների զուգաձևություններ

Այս հոլովման շրջանակներում դիտարկենք այն բառերը, որոնք հոլովվում են նաև այլ հոլովիչներով:

Ի – Ա // Ի. գէտ (գետի-գետաց//գետից), շնորհ (շնորհի-շնորհաց // շնորհից), սաղմոս (սաղմոսի-սաղմոսաց//սաղմոսից), ազգատոհմ (ազգատոհմի

---

[8] Գունդ – 1. կազմավորված զորք, 2. զորքի մի մասը, 3. բանակաթև, 4. Խումբ (Ի // Ի – Ա): Գունդ – 1. գունդ, 2. մոլորակ, 3. անիվ, 4. ակնակուռ գնդակ (գայիսոնի), 5. ծովի խորությունը չափելու գործիք, 6. լապտեր, 7. մարդու գլուխ (Ի // Ի – Ա, եզ. թ. նաև՝ Ո), (տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, նշվ. աշխ, էջ 477):

- ազգատոհմաց // ազգատոհմից), աստղագէտ (աստղագիտի - աստղագիտաց // աստղագիտից) և այլն:

Ի - Ա // Ո. ամա՛ն (ամանի - ամանաց//ամանոց), աղքատ (աղքատի - աղքատաց // աղքատոց), անկողին (անկողնի - անկողնաց//անկողնոց), անձրեւ (անձրեւի - անձրեւաց//անձրեւոց, ասպար (ասպարի - ասպարաց//ասպարոց), ապտակ (ապտակի - ապտակաց//ապտակոց) և այլն:

Ո – Ա // Ո հոլովումների շրջանակներում զուգաձևություններ են դրսևորում հետևյալ գոյականները. Արշակունիք - **Արշակունեաց // Արշակունւոց,** Ասորի - **Ասորեաց // Ասորւոց** (Ո հոլովմամբ հատկապես, երբ ոչ թե երկիրը, այլ ազգությունն է մատնանշվում): **Ո - Ա//Ո** հոլովման փոխանցումներով են հանդես գալիս նաև **գինի (գինւոյ - գինեաց // գինւոց), մեռելոտի (մեռելոտւոյ - մեռելոտեաց // մեռելոտւոց), ջորի (ջորւոյ - ջորեաց // ջորւոց**) և այլն:

Բ. Անկանոն կամ զարտուղի հոլովման մեջ ընդգրկված են հինհայերենյան այն բառերը, որոնք թեք հոլովաձևերում կա՛մ ստանում են հոլովիչներ, կա՛մ ենթարկվում են հնչյունական հերթագայությունների: Անկանոն հոլովման ենթարկվում են **այր** (տղամարդ), **տէր, հայր, մայր, եղբայր, քոյր, կին, տիկին, աւր // օր, գիւղ, տիւ** գոյականները:

2.4 ենթագլխում տրվում են գոյականի զուգաձևություններ բացառական հոլովում:

1. Ա արտաքին հոլովման գոյականների զուգաձևություններ

Գոյականական – ձևակազմական այդ կարգի զուգահեռ ձևերում առկա են եզակի բացառականին հատուկ **է** հոլովակերտով և առանց այդ վերջավորության ձևեր: Հմմտ. զուտ ձևաբանական հետևյալ տարբերակները. Հռովմ – ի Հռովմայ // ի Հռովմէ (նաև՝ Հռոմ – ի Հռոմայ // ի Հռոմէ), Անտիոք – յԱնտիոքայ / յԱնտիոքէ:

2. Ա ներքին հոլովման գոյականների զուգաձևություններ

Այս հոլովման բառերի բացառական հոլովում առկա են ձևաբանական – հնչյունափոխական տարբերակներ՝ ձևավորված Ա հոլովիչի առկայությամբ և նրա սղումով: Հմմտ. ակն – յականէ / յակնէ, արեգակն – յարեգականէ / յարեգակնէ, աղեղն – յաղեղանէ / յաղեղնէ:

3. Ի հոլովման գոյականների զուգաձևություններ

Այդօրինակ բառերի շրջանակներում կարող են լինել ուղղականի, վերջինից ձևավորված տրականի երկձև կազմություններ, որոնցով պայմանավորվում են բացառականում ի հայտ եկող տարբերակները: Հմմտ. ուղղ. Անտոնիոս / Անտոն, տր. Անտոնիոսի / Անտոնի, բաց. յԱնտոնիոսէ / յԱնտոնէ:

4. Ո հոլովման գոյականների զուգաձևություններ

Ո / Ի հոլովչային զուգաձևությամբ են պայմանավորված **թիւ** բառի եզակի բացառականում առկա տարբերակները. **ի թուոյ / ի թուէ**: Հմմտ. նաև

հատկանվանական հետևյալ զուգահեռ ձևերը. Պաղեստին – *ի Պաղեստինոյ // ի Պաղեստինէ:*

5. Ու հոլովման գոյականների զուգաձևություններ

Այդպիսի տարբերակներ ստեղծում են հիմնականում հասարակ անունները, ընդ որում՝ առավելապես եզակի թվում: Հմմտ. ի զարդուէ / ի զարդէ, ի խրատուէ / ի խրատէ, ի նախանձուէ / ի նախանձէ, ի վնասուէ // ի վնասէ, յայգուէ / յայգէ, ի սպասուէ // ի սպասէ, ի զօրուէ / ի զօրէ և այլն:

6. Ե հոլովման գոյականների զուգաձևություններ

Այս հոլովման գոյականների քերականական – ձևաբանական զուգաձևություններն ի հայտ են գալիս հոգնակի թեք ձևերում: Հմմտ. հոգնակի բացառականի այդօրինակ երկձևությունները (եղջիւր) եղջերք – յեղջերց / յեղջերաց, (տարր) տարերք – ի տարերց / ի տարերաց:

7. Ո – Ա խառը հոլովման գոյականների զուգաձևություններ

Այս հոլովման պատկանող բառերը եզակի տրականում զուգահեռաբար ստանում են – ջ հոլովակերտ, որով պայմանավորված են Ո – Ա հոլովման շրջանակներում եզակի բացառականում առկա այնպիսի զուգաձևություններ, ինչպիսիք են՝ եզակի տր. տարւոյ / տարւոջ, տեղւոյ / տեղւոջ, եզակի բաց. ի տարւոյ / ի տարւոջէ, ի տեղւոյ / ի տեղւոջէ:

8. Ի – Ա խառն արտաքին հոլովման գոյականների զուգաձևություններ

Ի – Ա խառն (արտաքին) հոլովման գոյականների բացառականում խիստ հազվադեպ են զուգահեռ ձևերը: Հմմտ. եզակի ուղղ. ծնող / ծնօղ, տրական ծնողի / ծնօղի, բացառական ի ծնողէ // ի ծնօղէ:

9. Ի – Ա խառը ներքին հոլովման գոյականների զուգաձևություններ

Այս հոլովման շրջանակներում զուգաձևություններ ի հայտ են գալիս եզակի բացառականում, երբ որոշ բառեր հանդես են գալիս առանց հոլովիչի կամ Ի – Ա ձայնդարձով: Հմմտ. խաշն – ի խաշնէ / ի խաշանէ, թոռն – ի թոռնէ / ի թոռանէ, մատն – ի մատնէ / ի մատանէ, բեռն – ի բեռնէ / ի բեռանէ, գառն – ի գառնէ / ի գառանէ, լեառն – ի լեռնէ // երբեմն՝ ի լեառնէ և այլն:

10. Անկանոն հոլովման գոյականների զուգաձևություններ

Այս հոլովման բառերի հոլովման առանձնահատկություններով են պայմանավորված նրանց ձևաբանական զուգաձևությունները, որոնք կարելի է դիտարկել եզակի և հոգնակի բացառականում՝ որպես հոլովական տարբերակներ: Հմմտ. տէր – ի տեառնէ / ի տեռնէ, տանուտէր – ի տանուտեառնէ / ի տանուտերէ, քոյր – ի քեռէ / ի քեռանէ / ի քեռոյ / ի քուրոջէ / ի քրոջէ:

2.5 ենթագլխում տրվում են գոյականի զուգաձևությունները գործիական հոլովում:

1. Ա պարզ արտաքին հոլովման գոյականների զուգաձևություններ

Եզակի գործիականում հազվադեպ են ձևակազմական, միաժամանակ ձևաբանական – հնչյունափոխական տարբերակները. Փիլիպէ – Փիլիպպեաւ /

Փիլիպեիւ, Արսինոյէ – Արսինոյեաւ / Արսինոյիւ (գոյականական – ձևակազմական տարբերակներ), Եսայի – Եսայեաւ / Եսայաւ (գոյականական – հնչյունափոխական տարբերակներ):

2. Ա պարզ ներքին հոլովման գոյականների զուգաձևություններ

Հոլովիչների, ինչպես նաև ներքին-արտաքին հոլովման տարբերություններ են առկա **-ուստ, -ուրդ** վերջաձանցներով կազմված գոյականների հետևյալ զուգաձևություններում. փախուստ – փախստեամբ // փախստիւ, խորհուրդ – խորհրդեամբ // խորհրդիւ: Հմմտ. հոգնակի գործիականի հետևյալ զույգ ձևերը. ծննդեամբք// ծննդովք, քրքմամբք // քրքմօք, ծաղկամբք // ծաղկաւք (օք):

3. Ե հոլովման բառերի զուգաձևություններ

Հմմտ. Ր ձայնորդով վերջացող մեկուկեսվանկանի հետևյալ բառերի երկձևությունները եզակի գործիականում. դուստր- դստերբ/ դստերաւ, կուպր- կպերբ/ կպրով, տետր- տետերբ/ տետրիւ:

4. Ի հոլովման բառերի զուգաձևություններ

Հմմտ. եզակի գործիականի հետևյալ երկձևությունները. հալուէ - հալուէիւ// հալուիւ (է> սղում), աղէտ- աղիտիւ // աղետիւ, խէթ- խիթիւ // խեթիւ, Արէս- Արիսիւ // Արեսիւ, Աբէլ- Աբիլիւ // Աբելիւ (է>ի // է>ե), Իսրայէլ - Իսրայէլիւ // Իսրայելիւ (անհնչյունափոխ// հնչյունափոխված տարբերակներ):

5. Ո հոլովման բառերի զուգաձևություններ

Ո//Ի հոլովումների փոխանցումներով են հանդես գալիս հետևյալ բառերը. ազոխ- ով // -իւ (այլև՝ Ո// Ի-Ա), -ովք // -իւ, -օք, բով, երկաթ, կողով, գինձ, երամ –ով, -ովք // -իւք, տուփ - ով, -ովք // -իւ (այլև՝ -ով, - ովք// -օք):

6. Ու հոլովման գոյականների զուգաձևություններ

Հմմտ. եզակի գործիականի հետևյալ բազմաձևությունները (եռաձևությունները). ասր - ասու// ասրով// ասերբ, մեղր - մեղու// մեղերբ// մեղուաւ, երէց - երիցու// երիցամբ// երիցաւ: Ինչպես տեսնում ենք, այդ կարգի բառերը ցուցաբերում են արտաքին և ներքին թեքման առանձնա-հատկություններ:

7. Ի-Ա խառն արտաքին հոլովման պատկանող գոյականների զուգաձևություններ

Ի-Ա//Ի. կարպետ, պետ, քահանայապետ, անապատ, ներկարար, պալատ, նահանգ, կինամոն, երգեհոն, բրաբիոն, կանթեղ, եթեր, ճարմանդ, յարկ, որձակ, վէպ, արօր, անտառ, պանդոկ (-ի, -աւ, -աց, -օք//-իւ, -ից), խնամակալ, գործակալ, կոկորդիլոս, ձկնորս, պարտէզ, խարոյկ, երաժիշտ, նաժիշտ, վիշտ, քաղաքապետ, բարերար, խոհարար, օժիտ, մնացորդ (-ի, -աւ, -աց, - օք// -իւ):

8. Ի-Ա ներքին հոլովման բառերի զուգաձևություններ

Այս հոլովման տարբերակները խիստ սակավադեպ են: Հմմտ. *ձեռն* գոյականի *ձեռ* բնից են կազմվել եզակի գործիականի ձերբ/ ձեռբ (=ձեռամբ)

ձևերը: Նույն բառը հոգնակի գործիականում ունի ձեռաւք (օք) // ձեռամբք ձևերը:

9. Ո- Ա հոլովման գոյականների զուգաձևություններ

Այս հոլովման բառերը հիմնականում հոգնակի գործիականում են ցուցաբերում եռաձևություններ. պղնձեաւք// -իւք// -եւք, երախտեաւք// -իւք// -եւք, կարծեաւք// -իւք// -եւք: Հմմտ. հոլովական- հնչյունափոխական հետևյալ տարբերակները. գործօք// գործեօք, ծիրանօք// ծիրանեօք, կեղծօք// կեղծեօք, հոտոտելօք// հոտոտելեօք[9], պատանեաւք// եօք, կարծեաւք// -եօք, այգեաւք// այգեօք:

10. Անկանոն հոլովման գոյականների զուգաձևություններ

Այս հոլովման բառերը ևս եզակի ու հոգնակի գործիականում հանդես են գալիս հոլովական զուգահեռ ձևերով: Դիտարկենք դրանք եզակի թվում: Զուտ ձևաբանական տարբերակներ են՝ հայր- հարբ// հարամբ, մարբ// մարամբ, կանամբ// կնաւ, տիկնամբ// տիկնաւ:

Ձևաբանական- հնչյունափոխական տարբերակներ են՝ եզակի թիվ քերբ// քեռբ// քուերբ, հոգնակի թիվ - քերբք// քեռբք// քուերբք[10]:

Հմմտ. հոգնակի գործիականում առկա տարբերակային հետևյալ ձևերը. հարբք//հարամբք, տիկնամբք// տիկնաւք (-օք), կանամբք// կնաւք (-օք):

Երրորդ գլուխը («Գոյականի թվակազմական զուգաձևությունները հին հայերենում») բաղկացած է չորս ենթագլուխներից:

3.1 ենթագլխում տրվում են թվակազմական այն զուգաձևությունները, որոնք պայմանավորված են իմաստային - գործառական հիմունքով. որևէ բառի իմաստային ընդլայնման հետ կապված՝ կարող է հանդես գալ նաև քերականական այս կամ այն ձևի զուգահեռ կիրառություն: Ինչպես՝ գիր - գիրք // գրեան // գրեանք, թուղթ - թուղթք // թղթեր // թղթեան, սերմ - սերմունք // սերմանք // սերմանիք, բարի - բարիք // բարիոք // բարւոք // բարեւք և այլն:

Գրաբարում թվակազմությունը ձգտում էր միակերպության՝ մանավանդ ձևաբանական այլ կարգերի համեմատությամբ, սակայն հոգնակերտ հավաքականների կիրառությամբ տարբերակային կազմավորումները զգալիորեն շատ են:

3.2 ենթագլխում զուգաձևությունների քննությունը կատարվում է ըստ թվակազմական հիմքի տարբերակների: Այսպես՝ գրաբարի հոգնակի ուղղական հոլովում, ըստ հիմնային տարբերակների, զուգաձևություն են

---

[9] Ըստ Ա. Բագրատունու՝ -օք// -եօք ձևերի առաջին եզրում առկա բառաձևերը հանդիպում են «մանաւանդ առ տաղաչափսն» (տե՛ս Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 34):

[10] *Քոյր* բառի՝ *քուերբ, քուերբք* ձևերը երկրորդական բառաձևեր են և բնորոշ ձևեր չեն համարվում: Ըստ Ա. Աբրահամյանի՝ այդ ձևերը «պարզ կերպով ցույց են տալիս, որ *քոյր* բառը ենթարկվում է Ե պարզ հոլովման» (տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 56):

դրսևորում այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ ծին - ծինք // ծնունք, կողմն - կողմանք // կողմունք, երագ - երագունք // երագք, աղանդ - աղանդիք // աղանդինք և այլն:

Գրաբարում սակավադեպ են հնչյունափոխված հոգնակիակազմ հիմքերը. բանակատեղք // բանակետղք, աղբիւրք // աղբերք, Մարիամանք // Մարեմանք:

Թվակազմության նորմը սահմանում է, որ գրաբարի հոգնակիակազմ հիմքերը զուգորդվում են **ք, ց, ս** մասնիկների հետ, սակայն կարող են հանդիպել նաև տարբեր հոգնակերտներով հանդես եկող հիմքեր: Տվյալ դեպքում բուն հոգնակերտ // հավաքական հոգնակերտ հակադրության մեջ կա գործածության անհամարժեքություն:

3.3 ենթագլխում տրվում են թվակազմական այն զուգաձևությունները, որոնք ստեղծվում են միևնույն հիմքին հոմանիշ տարբեր հոգնակերտ մասնիկներ ավելացնելու միջոցով: Բուն և հավաքական հոգնակերտներով կազմությունները գործածության հաճախականության տեսակետից հին հայերենում համարժեք չեն: Դրանք մատենագիտական վկայություններում հանդիպում են վիճակագրական տարբեր հաճախականությամբ: Ինչպես՝

- ք // - եայք՝	համատոհմք // համատոհմեայք
- եան // -եայք՝	որկորեան // որկորեայք
-ստայք // ստեայք՝	գեօղաստայք // գեօղաստեայք
- անք // - եանք՝	Նոյանք // Նոյեանք, ախոյանք // ախոյեանք
- ք // - եան՝	շաբաթք // շաբաթեան, նոխազք // նոխազեան հեսկք // հեսկիք // հեսկեան, ջորիք // ջորեան

Բաղադրյալ **եան-ք** կառույցով անեզական-հավաքական գոյականներ են կազմվում տոհմանուններից՝ հանդես գալով որպես երկձևության մի եզր՝

-եան // -եանք՝	Մամիկոնեան // Մամիկոնեանք, Յաբեթեան // Յաբեթեանք, Պռոշեան // Պռոշեանք
-եար // -եանք՝	որեար // որեանք
-եայք // -եանք՝	հայկեայք // հայկազեանք
-եանք // իք՝	Դարեհեանք // Դարեհիք

Ուշագրավ են նաև **-ութիւն** ածանցով կազմված գոյականների՝ հավաքականության իմաստով գործածությունները տարբերակային ձևերի մի եզրում. **գերութիւն // գերիք, մարդկութիւն // մարդիկ // մարդկան, զինուորութիւն // զինուորք, ընտանութիւն // ընտանիք, կուսութիւնք //**

կուսանք, հայրապետութիւնք // հայրապետք, աշակերտութիւն // աշակերտք, քահանայութիւն // քահանայք:

Ինչպես տեսնում ենք բերված օրինակներից, թվակազմության մակարդակում զուգաձևությունն արտահայտվում է՝

ա) բուն հոգնակերտ // հավաքական հոգնակերտ (ք // անի, ք //անք, ք // եայք, ք//եան, ք//ան և այլն),

բ) հավաքական հոգնակերտ // հավաքական հոգնակերտ մասնիկավոր կաղապարներում (այք//եայք, եան//եայք, ենի//եան, եար//եան, ունի//եան, եան//եանք, եար//եանք և այլն):

3.4 ենթագլխում տրվում է թվակազմական զուգաձևության այն տեսակը, որ ստեղծվում է միևնույն բառի կրկնության միջոցով. կրկնությունը տվյալ դեպքում հանդես է գալիս որպես հոգնակի թվի քերականական իմաստի արտահայտման միջոց: Մյուս կողմից՝ այդ կարգի կրկնությունն ունի ոճական-գործառական արժեք՝ իմաստի սաստկացման դերով: Կրկնությունը կատարվում է տարբեր եղանակներով. կա՛մ ելակետային միավորի կրկնությամբ (ազգ ազգ), կա՛մ հոգնակերտ բառաձևի կրկնությամբ (ազգք ազգք), կա՛մ ածանցական ձևի կրկնությամբ (ազգի ազգի): Հմմտ. **ազգ** (սեռ, տեսակ) - *ազգ ազգ // ազգք ազգք // ազգի ազգի* և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ուսումնասիրելով հին հայերենում գոյականի ձևաբանական զուգաձևությունները, հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

1. Հին հայերենում զուգաձևությունները ձևավորվում են լեզվական համակարգի վրա գրական, խոսակցական, ժողովրդական, բարբառային և այլ տարբերակների ազդեցության հետևանքով, ինչպես նաև պայմանավորված են տվյալ ժամանակաշրջանի պատմիչների, թարգմանիչների, կրոնական գործիչների և այլ ոլորտի մտավորականների լեզվամտածողությամբ, նրանց լեզվական աշխարհայացքով:
2. Հին հայերենում գոյականի ձևաբանական զուգաձևությունները դրսևորվում են հոլովման և թվի քերականական կարգերում:
3. Հին հայերենում թե՛ հոլովման և թե՛ թվի քերականական կարգերը զուրկ են միակերպությունից. ընդ որում, հոլովի կարգը ձգտում է անմիակերպության:
4. Վիճակագրական տեսանկյունից անհամեմատ մեծ թիվ են կազմում հոլովական զուգաձևությունները, որոնք պայմանավորված են հոլովանիշ թեքույթների զուգահեռ կիրառություններով:
5. Զուգաձևություններն ի հայտ են գալիս սեռական հոլովում, որում

առանձնացվում են որոշակի կառուցատիպեր: Ըստ այդմ՝ սեռական հոլովում արձանագրված զուգաձևությունները ամբողջական գաղափար են տալիս գրաբարի հոլովական հարացույցի տարբերակային ձևերի մասին՝ համաժամանակյա կտրվածքով:

6. Հին հայերենում հոլովական զուգաձևությունները հանդես են գալիս հետևյալ կառուցատիպերով. Ո//Ի, Ի//Ա, Ո//Ու, Ու//Ան, Ա//Ու, Ի//Ու, Ա//Ո, Եան//Ո, Եան//Ի, Ø//Ա կամ Ø//Ո:

7. Հոլովական զուգաձևությունների վիճակագրությունը ցույց է տալիս, որ առավել հաճախադեպ են բառի նախնական (առաջնային) հոլովիչի իրացումները:

8. Զուգաձևություններն ընդգրկում են թե՛ հատուկ և թե՛ հասարակ անունները:

9. Հինգերորդ դարում երբեմն զուգաձևություն դրսևորում են երկուսից ավելի հոլովիչներ (ինչպես՝ Ո//Ու//Ա):

10. Ընդհանրապես եռաձևույթ զուգաձևությունը հատուկ է հին հայերենի ուշ շրջանին:

11. Հին հայերենի հոլովական համակարգում ամենից միակերպ հոլովը եզակի հայցականն է:

12. Մյուս թեք հոլովներում զուգաձևությունների քննությունը նոր կառուցատիպեր չի բացահայտում. գործիական հոլովում ի հայտ եկող զուգաձևությունները պայմանավորված են նրա հոլովակազմական հիմքի՝ սեռականի դրսևորած զուգաձևություններով:

13. Գոյականի թվի կարգում զուգաձևությունները դրսևորվում են թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվում:

14. Թվակազմական զուգաձևությունները պայմանավորված են բուն հոգնակերտ մասնիկների և հավաքական հոգնակերտների զուգահեռ գործածությամբ:

15. Թվակազմական զուգաձևությունները հանդես են գալիս երկձևույթ և եռաձևույթ տարբերակներով:

16. Ա. Առանձնացվում են **երկձևույթ** զուգաձևությունների հետևյալ կաղապարները.

ա) բուն հոգնակերտ // հավաքական հոգնակերտ.

ք // անի ք //անք ք // եայք, ք//եան ք//ան

բ) հավաքական հոգնակերտ // հավաքական հոգնակերտ կաղապարներ.

այք // եայք եան // եայք ենի // եան եար // եան

ունի // եան եան // եանք եար // եանք անք // ունք

Բ. Առանձնացվում են **եռաձևույթ** զուգաձևությունների հետևյալ կաղապարները.

ք //անի// անիք ք //տի// տիք ունք // տի //տիք և այլն:

17. Որպես զուգաձևության եզր՝ հազվադեպ հանդես են գալիս -եր և -իկ հոգնակերտները հետևյալ կաղապարներում՝ եար // եր, ք// եր, ք // իկ, իք //իկ, ան// իկ:
18. Թվակազմական զուգաձևությունները պայմանավորված են հետևյալ գործոններով.
    ա) իմաստային - գործառական հիմունքով,
    բ) թվակազմական հիմքի տարբերակներով,
    գ) հոգնակերտ մասնիկների զուգորդմամբ,
    դ) ոճական-գործառական հիմունքով:
19. Գոյականի հոլովական համակարգի և թվակազմության ոլորտի զուգաձևությունները բնութագրում են գոյական խոսքի մասի յուրահատկությունները 5-րդ դարի մակարդակում. դրանք կարող են քննության եզրեր դառնալ համատիպ իրողության տարժամանակյա ուսումնասիրության համար (հին հայերենի ենթափուլերի միջև, ինչպես նաև հին հայերենի և հետագա լեզվափուլերի միջև):

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում

1. Գոյականի պարզ հոլովումների զուգաձևությունները գրաբարում (սեռական-տրական հոլովներ), Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», N 3 (14), Երևան, 2010, էջ 50-58:
2. Խառը և անկանոն հոլովումներին պատկանող բառերի զուգաձևությունը գրաբարում (սեռական-տրական հոլովներ), «Կանթեղ», Գիտական հոդվածների ժողովածու, N 3 (48), Երևան, 2011, էջ 36-41:
3. Գոյականի թվակազմական զուգաձևությունները հին հայերենում, Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», N 2-3 (26-27), Երևան, 2014, էջ 64-76:
4. Զուգաձևություններ գրաբարի ուղղական հոլովում, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, «Գիտական աշխատություններ», N 18, Գյումրի, 2015, էջ 197-203 (համահեղինակ՝ Լ.Մ. Խաչատրյան):
5. Գոյականի հոլովական զուգաձևությունների կառուցատիպերը Ե դարի մատենագրական երկերում, «Էջմիածին», Պաշտոնական ամսագիր, Օգոստոս, 2015, Ս. Էջմիածին, էջ 60-68 (համահեղինակ՝ Լ.Մ. Խաչատրյան):
6. Զուգաձևություններ գրաբարի բացառական հոլովում, Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», N 1 (31), Երևան, 2016, էջ 3-12:

7. Բառային-մասնիկավոր զուգաձևություններ գոյականի թվի կարգում, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», № 3 (41), Երևան, 2018, էջ 3-9 (համահեղինակ՝ Լ.Խաչատրյան):

8. Գոյականի զուգաձևությունները 5-րդ դարի մատենագրության լեզվում, «Քոփի Փրինթ» հրատ., Ե., 2021, 160 էջ:

Енгоян Лусине Ашотовна

Морфологические параллелизмы существительного

в древнеармянском языке

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10. 02.01 - "Армянский язык".

Защита диссертации состоится 27-го июня 2022г., в 15:00 часов на заседании специализированного совета по лингвистике 019 ВАК, при Институте языка им. Г. Ачаряна Национальной Академии Наук РА, по адресу 0015, г. Ереван, ул. Григора Лусаворича 15.

РЕЗЮМЕ

Актуальность темы: В процессе развития языка появляются параллелизмы уровенных единиц, которые считаются альтернативами, выражающими одно и то же грамматическое значение. На древнеармянском уровне параллелизмы существительного появляются в системе склонения и в грамматической категории числа. Актуальность исследования обусловлена комплексным изучением этих вопросов.

Цель исследования - охарактеризовать морфологическую норму древнеармянского языка, показать выражение параллелизмов в системе существительных, найти некоторые принципы, которые могут координировать параллелизмы существительного, определить структуры падежных и числообразующих параллелизмов существительного в V веке.

Научная новизна исследования: В ходе исследования были обнаружены группы падежных параллелизмов существительного и типы падежных склонений. Кроме этого, были отделены падежные основы параллелизмов, лингвистические факторы, обуславливающие параллелизмы, которые в свою очередь обусловлены изменениями морфологического норма грабара.

Теоретическое и практическое значение исследования заключается в том, что оно показывает коррелятивные изменения между древнеармянской морфологической нормой и морофологического параллелизма, раскрывает структурные типы параллелизмов, которые могут быть использованы для формирования теоретических курсов истории языка. С другой стороны, лингвистически систематизированный материал может использоваться в диахронических анализах при сравнении разных этапов развития языка (древнеармянский – среднеармянский - современный армянский).

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложения.

Во введении обосновывается актуальность темы, отмечается новизна исследования, представляются основные цели и задачи работы, кратко излагаются принципы и методы исследования.

Первая глава («Морфологические параллелизмы существительных в древнеармянском») состоит из двух разделов. Описываются характеристики лингвистической нормы, поскольку концепция соединения тесно связана с ее пониманием, а морфологические параллелизмы в языке получаются из модификации морфологической нормы.

Параллелизмы рассматриваются как варианты, которые бывают: а) равнозначными, эквивалентными, которые свободно заменяют друг друга; б) не равнозначными, один из которых считается основным, а второй - вторичным; в) неравными, один из которых является нормативным, а другой - нет.

В рамках работ историков 5-го века проводится исследование параллелизма склонений и раскрываются их следующие модели: Ո//Ի, Ի//Ա, Ո//Ու, Ուլ//Ան, Ա//Ու, Ի//Ու, Ա//Ո, Եան//Ո, Եան//Ի, Ø//Ա или Ø//Ո:

Вторая глава ("Параллелизмы склонения существительных в древнеармянском") состоит из пяти разделов. Здесь приведены параллелизмы существительных как регулярных, так и нерегулярных склонениий. Параллелизмы в регулярных склонениях рассматриваются в рамках простых (ա, ի, ո, ու, է) и смешанных (ի-ա, ո-ա), а так же внешних и внутренних склонений. Параллелизмы в нерегулярных или нелинейных склонениях рассматриваются в прямых и косвенных падежах. Параллелизмы в именительном падеже обуславливаются вариациями фонетического изменения, а в родительном -вариациями основ. Параллелизмы существительных в косвенных падежах обусловлены способностью выражать один и тот же грамматический смысл разными склонениями.

Третья глава ("Числообразующие параллелизмы существительных в древнеармянском") состоит из трех разделов. Рассматриваются те числовые параллелизмы, которые основаны на различиях семантики или на смысловом расширении слова. Числообразовательные параллелизмы исследуются в соответствии с базовыми падежными версиями, а потом рассматриваются те параллелизмы, которые создаются различными частицами.

В **заключении** приводятся основные результаты исследования.

Yengoyan Lusine Ashot

The Morphological Parallelisms of Noun in Old Armenian Language

Dissertation for the degree of Candidate of Philological Sciences on the speciality 10.02.01 "The Armenian Language".

The defense will be held on 27 June, 2022 at 15:00, at the session of the Specialized Council on Linguistics 019 SCC RA in the Institute of Language after H. Acharyan of National Academy of Sciences of RA. (address: Yerevan, 0015, G.Lusavorich Str.15).

Abstract

Relevance of the topic: The level unit of parallelisms appear in the structure of the language during its development, which are considered to be alternatives, expressing the same grammatical meaning. In the Old Armenian level the parallelisms of the noun appear in the system of declension and grammatical order. Simultaneously, the complexity of these issues defines the relevance of this research.

The purpose of the research is: to characterize the morphological-noun norm of Old Armenian, to show the general expression of parallelisms in the system of nouns, to find some principles that can maximum coordinate the parallelisms of the noun, to explore the structural types of the declensional doublets of the noun in the 5th century, to identify the numerical parallelisms of the noun and the relevant conditioning factors:

Scientific novelty of the research: During the study, the groups of declensional parallelisms of noun and the types of synonymous declensions have been discovered. The study also separates the declensional basis of parallelisms and the linguistic factors related to parallelisms, which are conditioned by the changes of the structural norm in grabar.

Theoretical and practical significance of the research: The theoretical significance of this research is that it reveals the correlation between the change of the classical Armenian structural norm and structural parallelisms. The research also reveals the structural types of parallelisms, which can be used in the formulation of theoretical history of the language. On the other hand, the structured linguistic material can be used in comparative analyses (between the language cycles of Old Armenian - Medieval Armenian - Modern Armenian languages).

The Dissertation consists of the introduction, three chapters, conclusion, the list of used literature and the appendix.

The relevance of the topic is substantiated, the novelty of the research is noted, the main goals and tasks of the work are presented, the principles and methods of research are briefly presented **in the introduction.**

Chapter One ("The Morphological Parallelisms of Nouns in Old Armenian") consists of two subchapters. The characteristics of the linguistic norm are presented here, as the concept of parallelisms is closely related to the understanding of the linguistic norm, and the morphological parallelisms in the language are derived from the modifications of the morphological norm.

Parallelisms are considered as options that are: a) equivalent, equal: these are freely replaced by one another; (b) not equal, one of which is considered to be primary; the other is secondary; (c) unequal, one of which is normative and the other is not.

Then, within the framework of the 5th century historians' works, the investigation of declensional parallelisms, and the following concepts are revealed: Ո//Ի, Ի//Ա, Ո//Ու, Ու//Ան, Ա//Ու, Ի//Ու, Ա//Ո, Եան//Ո, Եան//Ի, Ø//Ա or Ø//Ո.

Chapter Two ("Inflectional Parallelisms of Nouns in Old English") consists of five subchapters. The parallelisms in declensions of nouns, both regular and irregular are given here. The regular pairs are examined by simple (ա, ի, n, ու, ե) and mixed doublets (ի-ա, n-ա) as well as external and internal flections.

Irregular or nonlinear inflectional parallelisms are examined in direct and oblique cases (singular and plural) and are interpreted as morphological variants.

Noun parallelisms in the nominative case appear in sound-changing versions, and in the accusative case with the base versions. In oblique cases noun parallelisms are conditioned by the ability to express the same grammatical meaning by different flexions.

Chapter Three ("Numerical Parallelisms of Nouns in Old Armenian") consists of three subchapters. The numerical parallelisms based on meaning differences or the factor of semantic expansion of the word are given here. Any component of a numerical parallelisms may or may not gradually disappear, even not be used or may be approved and be put into application as an equivalent, even becoming a normative primary form. The numerical parallelism are examined according to the base versions, after which the same parallelisms that are created by plural-forming particles are given.

Over the main results of the research are given **in the conclusions.**